Կ. Վ. ՄԵԼԻՔ-ՓԱՇԱՅԱՆ

ՍՈՎԵՏԱՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԱԾ ՈՒՂԻՆ

Սովետական կարգերի հաստատումով Հայաստանում լայն հնարավորություններ ստեղծվեցին գիտության տարբեր ճյուղերի զարգացման, այդ թվում նաև ազգագրական գիտության համար։

Հայ ազգագրության սկզբունքները գալիս են իր հնությունից, դեռևս այն ժամանակից, երբ մենք չունեինք գիր ու գրականություն, և այդ շրջանի ազգագրության ուսումնասիրման առումով չափազանց կարևոր նշանակություն է ստանում Հայաստանում և այլուր հայտնաբերված պարսկերեն, հունարեն, լատիներեն, արամեերեն և այլ լեզուներով գրված բազմաթիվ վիմագիր արձանագրությունները, որոնք արժեքավոր տեղեկություններ են հաղորդում հայերի մասին։ Բացառիկ արժեք ունեն հունա-հռոմեական մատենագիրների՝ Հերոդոտի, Քսենոֆոնի, Ստրաբոնի, Պլուտարքոսի, Պավսանոսի, Պրոկոպիոս Կեսարացու և այլոց հաղորդած տեղեկությունները հայ ժողովրդի ծագման, նիստուկացքի, սովորությունների, կրոնական հավատալիքների, նյութական մշակույթի վերաբերյալ։ Հայ ազգագրության պատմության մեջ ուրույն տեղ է գրավում մեր ազգագրության հայր Մովսես Խորենացին, որի մատենագրությունը անսպառ ազգագրական նյութեր է տալիս ոչ միայն հայ, այլև շատ ժողովուրդների մասին։ Ուշագրավ տեղեկություններ են հաղորդում նաև մեր մյուս մատենագիրները՝ Ագաթանգեղոսը, Փավստոս Բուզանդը, Եղիշեն, Սեբեոսը, Ղևոնդը, Հովհան Մամիկոնյանը, Անանիա Շիրակացին, Կիրակոս Գանձակեցին, Ստեփանոս Օրբելյանը և ուրիշներ։ Հետաքրքրական են պարսկական, արաբական, վրացական, թուրքական, աղրբեջանական, եվրոպական, ռուսական պատմական աղբյուրներում և ճանապարհորդների ուղեգրություններում տեղ գտած հայերի վերաբերյալ ազգագրական նյութերը։ Առանձնակի արժեք ունեն ազգագրական այն նյութերը, որոնք զետեղված են մեր պարբերական մամուլում։ Այդ տեսակետից առավել աչքի են ընկնում «Բազմավեպ», «Հանդես ամսօրյա», «Արարատ», «Մուրճ», «Փորձ» ամսագրերը, «Բյուրակն» երկշաբաթաթերթը, «Մշակ, «Արձագանք», «Նոր դար» օրաթերթերը։

Հայ ազգագրության պատմության մեջ յուրահատուկ տեղ է գրավում մեծ լուսավորիչ-դեմոկրատ Խ. Աբովյանը։ Նրա գեղարվեստական երկերը բացառիկ ազգագրական արժեք են ներկայացնում, որոնց գլուխգործոցն է կազմում «Վերք Հայաստանի» վեպը։ Բացի դրանից, նրա գրչին են պատկանում նաև մի շարք ազգագրական ուսումնասիրություններ, որոնք գրված են գիտական բարձր մակարդակով և լրիվ հիմք են տալիս Խ. Աբովյանին համարելու հայ գիտական ազգագրության հիմնադիրներից մեկը։ Հետևելով Խ. Աբովյանի օրինակին մի շարք գրողներ սկսեցին իրենց գեղարվեստական գործերում մեծ չափով օգտագործել ազգագրական նյութերը։ Մ. Թաղիադյանի, Պ. Պռոշյանի, Մ. Նալբանդյանի, Բաֆֆու, Գ. Սունդուկյանի և այլոց երկերում ազգագրական նյութերի անսպառ պաշար է կուտակված։

XIX դարի 70—80-ական թվականներին հանդես է գալիս հայ ազգագրության ռահվիրաներից մեկը՝ Ռ. Սրվանձտյանցը։ Նրա «Երթոց ու բրոցը», «Հնոց ու նորոց»-ը, «Մանանա»-ն, «Թորոս ախպարը», «Համով հոտով» ժողովածուները որպես անդուգական գործեր մտան մեր ազգագրության ոսկյա ֆոնդը։ Ազգագրական նյութերի գրառման գործում կարևոր դեր խաղաց Ռ. Խալաթյանցի կողմից 1887 թ. հրատարակված ազգագրական նյութերի հավաքման ծրագիրը։

Ազգագրական գիտության ստեղծման և ազգագրական աշխատանքների կազմակերպման ասպարեզում անգնահատելի ծառայություններ մատուցեցին Ե. Լալայանի կողմից 1896 թ. հիմնված «Ազգագրական հանդես»-ը, որը հրատարակվեց մինչև 1916 թ., լույս ընծայելով 26 ստվարածավալ հատորներ, 1900 թ. Թիֆլիսում ազգագրական հրատարակչական ընկերությունը և 1906 թ. դարձյալ Թիֆլիսում Հայոց ազգագրական ընկերությունը։ Վերջինիս կողմից Ե. Լալայանի ջանքերով կազմակերպվեցին ազգագրական թանգարանը, ազգագրական-մարդաբանական և կովկասագիտական գրադարանը, որոնք կարևոր դեր խաղացին մեր հոգևոր և նյութական մշակույթի հավաքման և ուսումնասիրման բնագավառում։ Ե. Լալայանը առաջինն էր, որ գիտական հիմքերի վրա դրեց ազգագրական և բանահյուսական նյութերի հավաքման գործը, իր բազմաթիվ շրջագայությունների ժամանակ մենակ, թե գիտարշավախմբերի գլուխ անցած՝ հավաքեց չափազանց արժեքավոր նյութեր։ Նրա ուսումնասիրությունները Գանձակի, Վարանդայի, Վասպուրականի, Ջավախքի, Նոր Բայազետի վերաբերյալ մնում են չգերազանցված։ Նա հիմնադիրը հանդիսացավ հայ գիտական ազգագրության։

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո Ե. Լալայանը փոխադրվում է Երևան, մեծ դժվարությամբ նրան հաջողվում է Թիֆլիսի ազգագրական թանգարանի նյութերը 1921 թ. տեղափոխել Երևան և դառնում նրա բազայի վրա կազմակերպված թանգարանի առաջին վարիչը, որտեղ և կենտրոնանում են Հայաստանում տարվող ազգագրական աշխատանքները։ Այդ շրջանում Ե. Լալայանը գրում է մի շարք արժեքավոր աշխատություններ, որոնց մեջ ուշագրավ է «Նիժի և Վարդաշենի ուտիները ազգագրական տեսակետով»[1] հոդվածը, որը հանդիսանում է նրա երկարամյա ուսումնասիրության արդյունքը և հիմնականում գրված է իր հավաքած նյութերի հիման վրա։ Հեղինակը համառոտակի նկարագրում է Նիժի և Վարդաշենի տեղագրությունը, բուսական և կենդանական աշխարհը, ներկայացնում ուտիների ծագման մասին եղած տեսակետները։ Սոցիալական կարգերը բնորոշելիս, հետաքրքիր տվյալներ է բերում անցյալում ուտիների մոտ գոյություն ունեցած մայրիշխանության մասին։ Ապա լույս է տեսնում նրա «Հուղարկավորությունը և կերեկմանների զարգացումը Հայաստանում»[2] հետազոտությունը, ուր նա կանգ է առնում հուղարկավորության ձևերի և նրանց հետ կապված սովորությունների վրա։ Ե. Լալայանի վերջին աշխատությունը «Տղաբերքի սովորությունների զարգացումը հայոց մեջ» հոդվածն է, որը լույս տեսավ հեղինակի մահից հետո, 1931 թ., ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի № 5 տեղեկագրում։ Այդ աշխատությունում Ե. Լալայանը օգտագործելով իր երկար տա-

1 «ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի տեղեկագիր», № 1, Երևան, 1926։
2 Նույն տեղում, № 3, Երևան, 1928։

րիների ընթացքում հավաքած նյութերը, ինչպես նաև համեմատական ազգագրության հարուստ տվյալները, հանգամանորեն բացահայտում է տղաբերքի սովորությունների էվոլյուցիան՝ սկսած հնագույն շրջանից մինչև XX դարի սկիզբը։

Տղաբերքի սովորությունները քննելիս Ե. Լալայանը հմտորեն ցույց է տալիս նրանց աղերսը ջրի, կրակի, կենդանիների, ծառերի, քարերի պաշտամունքի և նմանաբանական կախարդության հետ։ 1931 թ. լույս տեսավ նրա «Դամբաբանների պեղումները Խորհրդային Հայաստանում» մենագրությունը, որտեղ ամփոփված են Ե. Լալայանի հնագիտական բնույթի աշխատությունները։

Գրեթե նույն ժամանակ իր ակտիվ ազգագրական գործունեությունն է ծավալում 1924 թ. Երևան փոխադրված Ստ. Լիսիցյանը։ Նա ազգագրությամբ սկսել է զբաղվել դեռևս XIX դարի վերջից, սակայն XX դարի 20-ական թթ. նա իրեն գրեթե ամբողջությամբ նվիրում է հայ ազգագրությանը և դառնում սովետահայ ազգագրական դպրոցի հիմնադիրը։ Իր ուսումնասիրությունների մեջ Լիսիցյանը մեծ տեղ էր հատկացնում հայկական բնակարանի ուսումնասիրությանը։ 1925 թ. հունիսի 21-ին նա Կովկասի պատմահնագիտական ինստիտուտի գիտնականների ժողովում զեկուցում է հայկական գյուղական բնակարանների ուսումնասիրման հարցի մասին. զեկուցումը մեծ հետաքրքրություն է առաջ բերում և տպագրվում է ինստիտուտի «Տեղեկագրում»[3]։ Այն նվիրված էր գլխատան ուսումնասիրությանը Ղարաբաղում։ Տրվում էր գլխատան նկարագրությունը, տարածման շրջանները, նրա աղերսը ժամատան հետ և այլն։ Նույն ինստիտուտում Լիսիցյանը զեկուցում է Բարձր Հայքի բնակարանների մասին[4], հանգամանորեն նկարագրելով այդտեղի տները իրենց ամբողջ կոմպլեքսով հանդերձ՝ տուն, գոմ, ախոռ, դրսի օդա և այլն։ Լիսիցյանը լուծում է նրանց ծագմանն հետ կապված որոշ հարցեր, ինչպես նաև կանգ է առնում ժողովրդական տների և եկեղեցական ճարտարապետության կապի վրա։ Բնակարանների ուսումնասիրությանն է նվիրված նաև նրա մյուս հոդվածը՝ «Հայաստանի բնակարանների ուսումնասիրության նյութերից»[5], ուր քննարկվում են Մեղրու, Նոր Բայազետի և հատկապես Փամբակի ու Դաբալագյազի գյուղական տները։ 1927 թ. լույս է տեսնում Լիսիցյանի մի շատ հետաքրքիր հոդվածը, որը վերնագրված է՝ «Շատախի պատմա-ազգագրական ուրվագծերը»[6]։ Այստեղ նա տալիս է Շատախի աշխարհագրական դիրքը, վարչական բաժանումը, կանգ առնելով էմիրների, մելիքների գործունեության վրա և այլն։ Լիսիցյանն առաջին անգամ հայ ազգագրության մեջ արծարծում է հայերի մոտ գոյություն ունեցող «եղբայրական միությունների» (հասակակիցների միություն) հարցը։ Վերոհիշյալ հոդվածները բարձր գնահատվեցին գիտական հասարակայնության կողմից[7]։ Ուշագրավ է Լիսիցյանի «Սրբավայրերը լեռնանցքներում»[8] հետազոտությունը, որը նվիրված է Հայաստանի լեռնանցքներում գոյություն ունեցող սրբավայրերին և վերլուծում է այդտեղ

[3] К изучению армянских крестьянских жилищ. «Известия Кавказского историко-археологического института», т. III, Тифлис, 1925.

[4] «Крестьянские жилища Высокой Армении», там же, т. IV, Тифлис, 1927.

[5] Նույն տեղում, հատ. 6։

[6] Նույն տեղում, հատ. 5։

[7] Տե՛ս «Бюллетень КИАИ», № 3, 1927.

[8] «Советская этнография», № 4—5, 1936.

կատարվող սովորությունները, բացահայտում նրանց ակունքները, որոնք տանում են դեպի հեթանոսական շրջան և կապվում են լեռների ոգիների, կրակի և ջրի պաշտամունքի հետ։

1936 թ. լույս է տեսնում Լիսիցյանի «Հայ ազգագրությունը 15 տարիների ընթացքում»[9] հոդվածը, որտեղ նա կանգ է առնում այն նվաճումների վրա, որ ձեռք է բերել սովետահայ ազգագրությունը 15 տարիների ընթացքում, տալիս է Ե. Լալայանի, Գ. Ջուրսինի, Ի. Պետրուշևսկու, Խ. Սամվելյանի աշխատանքների վերլուծությունը։ Միաժամանակ նա նշում է ազգագրական գիտության թույլ զարգացումը Հայաստանում, գիտական կադրերի պակասը, հավաքչական աշխատանքների անբավարարությունը և Երևանի Համալսարանում ազգագրական ամբիոնի բացակայությունը և այլն։

Ստեփան Լիսիցյանի լավագույն գործերից մեկը «Ուրվագծեր նախահեղափոխական Հայաստանի ազգագրության» աշխատությունն է, որը լույս տեսավ հեղինակի մահից հետո «Կովկասի ազգագրական ժողովածու»-ում[10]։

Ս. Լիսիցյանի վերոհիշյալ աշխատությունը չափազանց արժեքավոր գործ է, ուր հեղինակն առաջին անգամ գիտական շարադրանքով ներկայացրեց հայ ազգագրությունը։ Սովետական ականավոր ազգագրագետ պրոֆ. Մ. Կոսվենը 1946 թ. դեկտեմբերի 15-ին Ս. Լիսիցյանին նվիրված նամակում գրում է. «Այդ աշխատությունը իր բնույթով եզակի է, կատարված է գերազանց, և փառք ու պատիվ է բերում հեղինակին»[11]։

Հայ ազգագրության պատմության մեջ առանձնակի տեղ է գրավում պրոֆ. Խ. Սամվելյանը։ Նա դեռևս նախասովետական շրջանում հանդես եկավ մի շարք փայլուն հոդվածներով հայ ազգագրության և իրավունքի տարբեր հարցերի շուրջը, որոնց զգալի մասն ամփոփված են նրա «Հին Հայաստանի կուլտուրան»[12] եռահատոր մենագրության մեջ, ուր առաջին փորձն է կատարվում տալու Հայաստանի նյութական և հոգևոր մշակույթի զարգացման փուլերը սկսած նախնադարյան համայնական կարգերից, մինչև XX դարը։ Աշխատությունը գրված է գիտական բարձր մակարդակով, օգտագործված ժամանակի ռուսական և եվրոպական առաջավոր գիտության նվաճումները։ Այդ նախընթացք չունեցող գործում Խ. Սամվելյանին հաջողվել է առաջ քաշել և լուծել մի շարք կարևոր պրոբլեմներ, կապված հայ ընտանեկան համայնքի, նահապետական գերդաստանի, մայրիշխանության, հարսանիքի, ամուսնության, կրոնական հավատալիքների, ժողովրդական տոների հետ։ XX դ. 20—30-ական թվականներին Խ. Սամվելյանը «Նիմանդ» կեղծ անվամբ հրատարակեց երեք տասնյակից ավելի հակակրոնական բնույթի հոդվածներ և բրոշյուրներ, որոնք լույս տեսան «Անաստված», Հայաստանի աշխատավորուհի», «Վերելք» ամսաթերթերում, «Խորհրդային Հայաստան», «Մաճկալ» թերթերում և առանձին գրքույկներով, որով նա հիմք դրեց հայ հակակրոնական գրականության։ Խ. Սամվելյանը Ե. Լալայանի հետ միասին ձեռնամուխ եղան կազմելու հայ

9 Նույն տեղում։

10 «Труды Института этнографии», новая серия, т. XXVI, М., 1955.

11 Ստ. Լիսիցյանի արխիվ։

12 Խ. Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հատ. 1 Երևան, 1931, հ. 2 և 3-ը տրատարակվել են Երմֆանի հրատարակությամբ 1941 թ.։

ազգագրության մատենագիտություն, սակայն այդ աշխատանքները հեղինակների մահվան պատճառով անավարտ մնացին, այժմ այն շարունակվում է Հայաստանի պատմության թանգարանում, թանգարանի գիտաշխատակից Ն. Թորամանյանի կողմից։

Հայ ազգագրության մասին հետաքրքիր ուսումնասիրություններ ունի Կովկասի ազգագրության մեծ գիտակ Դ. Չուրսինը, որոնք ամփոփված են նրա մի շարք գրքերում, հոդվածներում և «Զանգեզուրի հայերը» գրքույկում[13]։

Ուշագրավ են Լ. Մելիքսեթ-Բեկի ազգագրական բնույթի աշխատությունները, որոնց մեջ աչքի են ընկնում «Կովկասում Կուվագայի սովորույթի հարցի մասին»[14], «Հայ ազգագրագետ-հնագետ Ե. Լալայանը»[15], «Նուրին-Նազարեթի երգի բանալին»[16] հոդվածները։

1940-ական թվականներին հրատարակվում են մի շարք ուշագրավ աշխատություններ հայ հեթանոսական կրոնի վերաբերյալ, որոնց մեջ յուրահատուկ տեղ է գրավում ակադեմիկոս Մ. Աբեղյանի 1941 թ. Երևանում լույս տեսած «Վիշապներ կոչված կոթողները իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ» աշխատությունը, որը կազմված է երկու մասից։ Առաջին մասում հեղինակը հերքում է Յա. Սմիրնովի և Ռ. Պիոտրովսկու կարծիքն այն մասին, որ Ռեղամա լեռներում և Արագածում հայտնաբերված ձկնակերպ կոթողները կապված են վիշապ-դեմոնի պաշտամունքի հետ, մարմնավորելով ջրի և պտղաբերության աստվածությունը։ Երկրորդ մասում հեղինակը փորձում է ապացուցել, որ այդ վիշապներ կոչված կոթողները Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններն են։

Հայ հեթանոսական կրոնի ուսումնասիրման բնագավառում առանձնահատուկ տեղ ունի ակադեմիկոս Գ. Ղափանցյանը։ Նրա բազմաթիվ աշխատություններն այդ ասպարեզում նոր և թարմ խոսք են ասում հեթանոսական մտածողության կնճռոտ հարցերը պարզաբանելու գործում։ Այդ տեսակետից հետաքրքրական է Ռ. Ղափանցյանի «Խեթական աստվածները հայերի մեջ»[17] աշխատությունը, ուր քննության է առնվում խեթերի և հայերի կրոնական առնչությունները, զուգահեռներ անցկացնելով Տարկի=Տորք, Արա—ս—Արա Հեպիտ=Հեպիտ, Մատան=Մաժան, Նար–Ծովինար աստվածների միջև։ Ուշագրավ է Գ. Ղափանցյանի «Ջրահարսի պաշտամունքը հայերի մեջ»[18] հոդվածը, որտեղ հեղինակն ապացուցում է ջրահարսի պաշտամունքի առկայությունը հայերի մեջ՝ միանգամայն ճիշտ կերպով Ծովինարը կապելով Նար աստվածուհու և այդ ազերսով Փոքր Ասիայի և Առաջավոր Ասիայի հոգևոր մշակույթի հետ։

1944 թ. լույս է տեսնում Գ. Ղափանցյանի «Արա գեղեցիկի պաշտամունքը» մենագրությունը։ Վերջինս մի փայլուն և բազմակողմանի հետազոտություն է, ուր հեղինակը հանգամանալից քննության է ենթարկում Արայի պաշ-

---

13 «География Закавказья», Тифлис 1929, որտեղ Անդրկովկասի «Բնակչությունը» ընդարձակ գլուխը, որը զուտ ազգագրական ուսումնասիրություն է և գրել է Գ. Չուրսինը։ Г. Ф. Чурсин, Армяне Зангезура, Тифлис, 1931, Культ железа у кавказских народов, Известия КИАИ, 1927, т. V.

14 Академия наук СССР, XV, М.—Л., 1935.

15 «Советская этнография», 1936, № 4—5.

16 «Գիտական ժողովածու նվիրված Հայաստանում սովետական իշխանության հաստատման 20-ամյակին», Երևան, 1941։

17 «Хеттские боги у армян», Ереван, 1940.

18 «Խորհրդային գրականություն», Երևան, № 6, 1940։

տամունքը, որպես մեռնող և հարություն առնող աստվածություն, տալիս է նրա զարգացման շրջանները, կանգ առնելով նրա պաշտամունքի նյութական մնացուկների վրա։ Այս բոլորը արվում է մեծ հմտությամբ, վերլուծության ենթարկելով ազգագրական, հնագիտական, լեզվական նյութերը։

«Հայաստան — հայերի բնօրրան»[19] աշխատությունում Գ. Ղափանցյանը կանգ է առնում հայ—Հայաստան—խեթական պաշտամունքի առնչությունների վրա՝ Անահիտ, հպիտ, Միհր, Նանա, Մաժան, Արա։

Հայ հեթանոսական կրոնի և պարսկական կրոնի աղերսների ուսումնասիրման առումով ուշագրավ է ակադեմիկոս Կ. Մելիք-Օհանջանյանի «Միթրա-Միհրը» «Սասնա ծռերի» մեջ աշխատությունը[20]։ Վահագնի պաշտամունքի ինքնությունը պարզելու առումով հետաքրքրական է պրոֆ. Բ. Առաքելյանի «Դիտողություններ վիշապաքաղ Վահագնի մասին»[21] հոդվածը։

1920-ական թվականներից մինչև 50-ական թվականների սկզբները ազգագրական աշխատանքների կենտրոնը եղել է Հայաստանի պատմության թանգարանը, որտեղ մեծ աշխատանքներ էին տարվում ազգագրական կարևոր նշանակություն ունեցող ցուցանմուշների ձեռք բերման և թանգարանային ցուցադրումներ կազմակերպելու ուղղությամբ։ Այդ նպատակով Հայաստանի տարբեր շրջաններ էին գործուղում գիտական արշավախմբեր և առանձին դիտաշխատողներ։ Բացի վերոհիշյալ աշխատանքներից, թանգարանում զգալի գործ են կատարվում հայ ժողովրդի նյութական և հոգևոր մշակույթի ուսումնասիրման բնագավառում։ 1950 թ. լույս է տեսնում թանգարանի ազգագրական բաժնի վարիչ Վ. Բդոյանի «Երկրագործական պաշտամունքի մի քանի հետքերը հայերի մեջ»[22] աշխատությունը, որը նրա թեկնածուական դիսերտացիայի համառոտությունն է, ուր քննության է առնվում երկրագործական պաշտամունքի հետ առնչվող՝ Արա Գեղեցիկի, Նարի, Գորտի, ջրի, հողի պաշտամունքի հետ կապված հարցեր։ Նույն հատորումն է զետեղված թանգարանի դիտաշխատակից Է. Կալ.ապետյանի «Գլխագինը հայոց հարսանեկան սովորությունների մեջ և նրա սոցիալ-տնտեսական արմատները» ռուսերեն գրված թեկնածուական դիսերտացիոն աշխատանքը, որտեղ քննության է առնվում գլխագնի ծագմ՝ան, զարգացման և նրա վերապրուկների հետ կապված շատ հարցեր։ 1951 թ. «Սովետսկայա էտնոգրաֆիայի» № 1-ում լույս տեսավ Վ. Բդոյանի «Արենակցական «ազգը» և ազգակցական հարաբերությունները հայերի մեջ» հոդվածը, ուր հեղինակը հետևելով պրոֆ. Կոսվենին՝ առաջին փորձն է կատարում ցույց տալու հայերի մեջ գոյություն ունեցող պատրոնիմիական հարաբերությունները։

Թանգարանում զբաղվում են նաև քրդերի ազգագրության ուսումնասիրությամբ։ Այդ գործը հաջողությամբ առաջ է տանում Ա. Ավդալը։ 1948 թ. լույս է տեսնում նրա «Քուրդ կինը նահապետական ընտանիքում ըստ ազգագրական և ֆոլկլորային նյութերի»[23] հետազոտությունը։ Քրդերի մեջ գոյություն ունեցող արյան վրեժին է նվիրված նրա «Արյան վրիժառությունը քրդերի մեջ և

---

19 «Историко-лингвистические работы», «Известия» АН Арм. ССР, Ереван, 1956.

20 Հայկական ՍՍՌ ԳԱ «Դրական-բանասիրական հետախուզումներ», Երևան, 1946։

21 Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», № 2, 1951։

22 Հայկական ՍՍՌ ԳԱ պետական պատմական թանգարանի աշխատություններ, հ. 3, Երևան, 1950։

23 Նույն տեղում, հ. 1, 1948։

նրա վերապրուկների վերացումը սովետական պայմաններում»[24] աշխատությունը։

1957 թ. հրատարակվում է Ա. Ավդալի «Անդրկովկասյան քրդերի կենցաղը» մենագրությունը, որը առաջին ուսումնասիրությունն է այդ բնագավառում և կազմում է քրդական նորաստեղծ ազգագրության հիմնաքարերից մեկը։ Աշխատությունը կազմված է երկու մասից։ Առաջին մասում տրվում է նախասովետական շրջանի անդրկովկասյան քրդերի կենցաղը, երկրորդում՝ սովետական։ Հեղինակը հատկապես ընդգծում է այն հսկայական փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել քրդերի կյանքում սովետական կարգեր հաստատվելու հետևանքով։ Նույն թվականին լույս է տեսնում նաև նրա «Պատրոնիմիան Հայաստանի քրդերի մեջ XIX դարում»[25] հոդվածը։

Սովետական թեմատիկան դառնում է թանգարանի գիտական աշխատողների հիմնական հետաքրքրություններից մեկը։ Մեկը մյուսի հետևից լույս են տեսնում սովետական կենցաղին նվիրված ուսումնասիրություններ, դրանցից են՝ Վ. Բդոյանի «Հայկական կոլտնտեսային տունը ազգագրական տեսակետից» հոդվածը[26], ուր հեղինակը տալիս է կոլտնտեսային տան էվոլյուցիան պատմական ֆոնի վրա, սկսած կոլտնտեսային շարժման սկզբից, մինչև 1955 թ.։ Վ. Բդոյանի մյուս հոդվածը նվիրված է կոլտնտեսականների ընտանիքին, ամուսնությանը և հարսանիքին, ընտանիքի ներսում գոյություն ունեցող հարաբերություններին, ընտանեկան կուլտուրային, և կրում է «Կոլտնտեսային ընտանեկան հարաբերությունները»[27] խորագիրը։ Այդ տարիներին գրվել է նաև «Հայ բանվորների կենցաղը մինչև ռևոլյուցիան և սովետական շրջանում», «Հայաստանի տեքստիլ արդյունաբերության բանվորների նոր կենցաղը և կուլտուրան», «Երևանի Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանի բանվորների կենցաղը» և այլ աշխատություններ։

Թանգարանում աշխատած ժամանակ Վ. Բդոյանը երկար տարիներ զբաղվել է հայ ժողովրդական խաղերի ուսումնասիրությամբ։ Նրա կազմած, «Հայ ժողովրդական խաղերը» բաղկացած են երեք հատորից։ Հրատարակված է միայն առաջին հատորը, որը լույս տեսավ 1963 թ. և անմիջապես սպառվեց, իսկ մյուս հատորները դժբախտաբար մնում են անտիպ։

1953 թ. ազգագրական աշխատանքները ավելի քան ծավալելու նպատակով Հայկական ՍՍՀ ԳԱ պետական պատմության թանգարանի ազգագրական բաժնից չորս գիտաշխատողներ փոխադրվում են պատմության ինստիտուտ, ուր ստեղծվում է ազգագրական խումբ, որտեղ ավելի նպաստավոր պայմաններ են ստեղծվում գիտական աշխատանքի համար։ Իրար հետևից սկսում են լույս տեսնել մենագրություններ և հոդվածներ նվիրված հայ ազգագրության տարբեր հարցերին։

1955 թ. լույս է տեսնում ինստիտուտի գիտաշխատակից Վ. Թումուրճյանի «Գորգագործությունը Հայաստանում» մենագրությունը, ուր տրվում է գորգագործության անցած փուլերը ամենահնագույն շրջանից սկսած մինչև մեր օրերը։ Առավել ուշադրություն է դարձված գորգագործության զարգացմանը Սովե

24 Նույն տեղում, հ. 4, 1952։
25 «Տեղեկագիր», № 8, 1957։
26 Նույն տեղում, № 4, 1955։
27 Նույն տեղում, 1956, № 7։

տական Հայաստանում։ Ազգագրական առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում 1955 թ. Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչությամբ լույս տեսած Ա. Մնացականյանի «Հայկական ղարդարվեստ» արժեքավոր մենագրությունը, որի համար նրան շնորհված է ազգագրության գծով պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան։ Աշխատության մեջ քննարկվում են մի շարք հարցեր, որոնք սերտորեն կապված են հայ ազգագրության հետ, դրանցից են՝ տոհմա-ընտանեկան հարաբերությունները, դուալ և ֆրակտիա կազմավորումները, տոնահանդեսները, ծեսերը, միստերիաները, դիցաբանությունը և այլն։ 1956 թ. հրատարակվում է Դ. Վարդումյանի «Լոռեցիների նոր կենցաղը» մենագրությունը։ Սա առաջին լուրջ փորձն է կոլտնտեսային գյուղացիության կենցաղի ուսումնասիրության։ Համառոտ պատմական ակնարկից հետո հեղինակը հանգամանալից ուսումնասիրության է ենթարկում լոռեցիների արտադրական կենցաղը, ընտանեկան հարաբերությունները, գյուղական բնակարաններն ու շենքերը, հատկապես ընդգծելով այն մեծ փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել սովետական շրջանում։

Լուրջ ուշադրություն է դարձվում հայ ազգագրության պատմության ուսումնասիրությանը, որն առանձին հետազոտության առարկա չէր դարձել և գտնվում էր կուսական վիճակում։ Մեկը մյուսի հետևից լույս են տեսնում ուշագրավ հոդվածներ այդ հարցերի վերաբերյալ։ Դրանցից են՝ Վ. Բդոյանի «Գ. Սրվանձտյանցը որպես ազգագրագետ»[28], Դ. Վարդումյանի «Ազգագրական գիտությունը Հայաստանում 1951—55 թթ.»[29], «Ազգագրական աշխատանքը Հայաստանում 5-րդ և 6-րդ հնգամյակում»[30], «Հայ ազգագրությունը սովետական իշխանության տարիներին»[31], Է. Կարապետյանի և Դ. Վարդումյանի «Սովետահայ ազգագրության մի քանի խնդիրների մասին»[32], Է. Կարապետյանի «Ազգագրական հանդեսի հրատարակության 60-ամյակի առթիվ»[33], Կ. Կուրդոևի «Խ. Աբովյանը որպես քրդագետ-ազգագրագետ»[34], Ա. Օդաբաշյանի «Խ. Սամվելյանը ազգագրագետ»[35], Կ. Մելիք-Փաշայանի՝ Լալայանի[36] և Ստ. Լիսիցյանի[37] մասին գրած հոդվածները։

Հայ ընտանեկան համայնքը գրեթե չի ուսումնասիրված։ Այդ բացը գալիս է լրացնելու 1958 թ. լույս տեսած Է. Կարապետյանի «Հայ ընտանեկան համայնքը» ռուսերեն մենագրությունը, որն իրենից ներկայացնում է հանգամանալից մի ուսումնասիրություն՝ համայնքի կազմի, նրա զարգացման շրջանների, սեփականատիրական, աշխատանքային և իրավական փոխհարաբերությունների վերաբերյալ։ Եվ ճիշտ է Վ. Կոբիշևը, երբ այդ աշխատությունը համարում է ուշագրավ և նկատելի ներդրում Հայաստանի վերաբերյալ պատմա-ազգագրական գրականության[38] մեջ։ Հայկական համայնքի մասին ուշա-

28 «Էջմիածին», 1946, № 1։
29 «Տեղեկագիր», 1956, № 9։
30 «Советская этнография», 1956, № 3.
31 Նույն տեղում, 1961, № 5։
32 «Տեղեկագիր», 1952, № 1։
33 «Советская этнография», 1956, № 3.
34 «Տեղեկագիր», 1955, № 10։
35 Նույն տեղում, 1958, № 11։
36 «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 3։
37 Նույն տեղում, 1965, № 4։
38 «Советская этнография», 1958, № 5.

գրավ է Լ. Խաչիկյանի «14—15-րդ դդ. գյուղական համայնքի մասին»[39] և Կ. Ղաֆադարյանի «Նյութեր Ախալցխայի հայ համայնքի պատմության վերաբերյալ»[40] շահեկան հոդվածները։

Հայ ազգագրության պատմության մեջ ուրույն տեղ է գրավում գիտության վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր Սրբուհի Լիսիցյանը։ Թեպետ նրա ուսումնասիրության հիմնական առարկան մեր ժողովրդի բազմադարյան պարարվեստն է, ամփոփված նրա «Հայ ժողովրդի հինավուրց պարերը և թատերական ներկայացումները» 5-հատորանոց մենագրության մեջ, որը ազգագրական տեսակետից բացառիկ հետաքրքրություն ունի, իրենից ներկայացնելով հայ և ոչ միայն հայ, ազգագրության վերաբերյալ նյութեր և ուշագրավ մաքերի մի անսպառ շտեմարան։ Վերոհիշյալ աշխատության առաջին հատորը լույս է տեսել 1958 թ., որի համար Ս. Լիսիցյանին 1959 թ. շնորհվել է ազգագրության գծով պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, երկրորդը գտնվում է տպարանում, հաջորդ հատորները պատրաստվում են հրատարակության։

Հնագիտության և ազգագրության զարգացման համար ավելի քան նպաստավոր պայմաններ ստեղծելու նպատակով Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի որոշմամբ 1959 թ. կազմակերպվում է գիտությունների ակադեմիայի սիստեմում հնագիտության և ազգագրության ինստիտուտ, որի հիմնադրումը մեծապես խթանեց ազգագրական գիտության զարգացմանը Հայաստանում։

Բավական ձգձգումներից հետո 1962 թ. ՍՍՀՄ ԳԱ ազգագրության ինստիտուտի հրատարակությամբ լույս տեսավ «Կովկասի ժողովուրդները» մեծածավալ աշխատության երկրորդ հատորը, որտեղ զետեղված են «Հայեր» խորագիրը կրող ուսումնասիրությունը (հեղինակներ՝ Ս. Երեմյան, Ստ. Լիսիցյան, Սրբ. Լիսիցյան, Դ. Վարդումյան, Էմ. Կարապետյան և այլոք), որի լույս ընծայումը բացառիկ երևույթ է հայ ազգագրության մեջ։ Այստեղ առաջին անգամ գիտական խոր վերլուծությամբ ներկայացվում է հայ ազգագրությունը։

Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության կենցաղի ուսումնասիրությանն է նվիրված 1963 թ. լույս տեսած Ռ. Վարդումյանի և Է. Կարապետյանի «Հայաստանի կոլտնտեսականների ընտանիքը և ընտանեկան կենցաղը» աշխատությունը, ուր քննության են առնվում ընտանիքի տնտեսական բազան, կուլտուրան, ընտանիքի ներքին կառուցվածքն ու կազմը, ընտանեկան հարաբերությունները և այլն։ Դա մի հետաքրքիր աշխատություն է սովետական շրջանի գյուղացիության վերաբերյալ։

Սովետական թեմատիկան հաստատուն մուտք է գործում հայ ազգագրության մեջ։ Բացի վերոհիշյալ գրքերից լույս են տեսնում նաև մի շարք հոդվածներ, այդ թեմաներով։ Նշենք դրանցից մի քանիսը՝ Կ. Սեղբոսյանի «Լենինականցիների ժամանակակից հարսանիքը»[41], «Արդյունաբերական Լենինականը որպես ազգագրական ուսումնասիրության օբյեկտ»[42], Ա. Ավդալի «Սովետական Հայաստանի քրդերի կուլտուրան և կենցաղը»[43] և այլն։ Ավարտված է Իջևան-Տավուշի հայերի արդի կենցաղը կոլեկտիվ ուսումնասիրությու-

39 «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 1։
40 Նույն տեղում, 1967, № 1։
41 «Տեղեկագիր», 1963, № 9։
42 «Լրաբեր հաս. գիտ.», 1966, № 8։
43 «Արևելագիտական ժողովածու», հ. 1, Երևան, 1960։

նը, «Արհեստավորական ավանդույթների վերափոխումը լենինականցիների արդի բանվորական կենցաղում» մենագրությունը, հրատարակության է պատրաստվում «Հայկական ՍՍՀ բնակչության կենցաղում տեղի ունեցած փոփոխությունները սովետական շրջանում» կոլեկտիվ հետազոտությունը։

Լույս են տեսել գյուղատնտեսության հետ աղերսվող ազգագրական մի քանի հետաքրքիր հոդվածներ՝ Յու. Մկրտումյանի «Հյուսիս-արևելյան Հայաստանի հայերի տարեկան անասնապահական ցիկլը նախահեղափոխական շրջանում»[44], Վ. Բդոյանի «Շարացան սիստեմը Վանա լճի ավազանում»[45], «Հայկական բրիչները և վարող գործիքները 19-րդ դ.»[46], «Հայկական հողուրագների պատմությունից»[47], Լ. Պետրոսյանի «Էջեր Հայաստանի փոխադրամիջոցների զարգացման պատմությունից»[48]։

Զգալի աշխատանքներ են տարվում հայ հեթանոսական կրոնը և ժողովրդական հավատալիքներն ուսումնասիրելու ուղղությամբ։ 1963 թ. հրատարակվեցին Կ. Մելիք-Փաշայանի «Անահիտ դիցուհու պաշտամունքը» մենագրությունը, Ա. Օղաբաշյանի՝ «Հայ ժողովրդական հավատալիքների մի քանի վերապրուկների մասին»[49], «Նոր տարվա տոնակատարության հարցի շուրջը»[50], «Քրիստոնեական ամանորի հետ կապված որոշ ծիսական վերապրուկներ»[51] հոդվածները և «Արդյոք գոյություն ունի ճակատագիր»[52] հակակրոնական բնույթի գրքույկը։

1963 թ. լույս են տեսել ականավոր ազգագրագետ, հանգուցյալ պրոֆ. Մ. Կոսվենի աշխատությունները պատրոնիմիայի վերաբերյալ[53], Է. Կարապետյանի «Ազգ-արենակցական խումբը հայերի մեջ»[54] հետազոտությունը, որը և արժեքավոր ներդրում է հայ ազգագրության մեջ։

1965 թ. ռոտեպրինտով լույս է տեսել Վ. Պետոյանի «Սասնա ազգագրությունը» մեծածավալ աշխատությունը, որը վերաբերվում է դեռևս կուսական վիճակում գտնվող Սասունի ազգագրության ուսումնասիրությանը։ Վ. Պետոյանը լինելով բնիկ սասունցի, կարողացել է հարազատորեն տալ սասունցիների նիստուկացը, սովորությունները, հոգևոր և նյութական մշակույթը, սոցիալական հարաբերությունները և այլն։ Պետք է ցավել, որ այդ ուշագրավ աշխատությունը լույս է տեսել սահմանափակ տպաքանակով, ընդամենը 750 օրինակ։

Հայական ՍՍՀ ԳԱ հրատարակչությամբ 1966 թ. լույս տեսավ Ս. Դավթյանի «Հայկական ժանյակ» արժեքավոր մենագրությունը, որը հանդիսանում է նրա երկար տարիների աշխատանքի արդյունքը։ Ս. Դավթյանը հանգամա-

44 «Տեղեկագիր», 1963, № 7։

45 «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 1։

46 «Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության և գյուղացիության պատմության», Երևան, 1964։

47 «Պատմա-բանասիրական հանդես», 1961, № 2։

48 Նույն տեղում, 1966, № 3։

49 «Տեղեկագիր», 1962, № 2։

50 «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 2։

51 «Տեղեկագիր», 1965, № 3։

52 «Գիտելիք ընկերության հրատարակչություն», Երևան, 1963։

53 М. О. Косвен, Семейная община и патронимия, Москва, 1963, «Կովկասի ժողովուրդների պատրոնիմիան», «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 3։

54 Э. Т. Карапетян, Родственная группа «азг» у армян Изд. АН Арм. ССР, Ереван, 1967.

նորեն ուսումնասիրել է ժանյակագործական դպրոցները, մասնավորապես՝ Վանի, որը եղել է ժանյակագործության խոշոր կենտրոն, ապա Կարնո, Այնթապի և այլ դպրոցներ։ Նրան հաջողվել է ցույց տալ ժանյակագործության զարգացման ուղին Անդրկովկասում ռուսական և եվրոպական պատմական ֆոնի վրա։

Ուշագրավ է Խ. Փորքշեյանի «Նոր Նախիջևանի հայ գյուղերի «կտրիճների միությունների» մասին»[55] հոդվածը։

Սովետական շրջանում մեծ ուշադրություն է դարձվել ազգագրական նյութերի հավաքմանը։ Դեռևս 1924 թ. Անդրկովկասյան գիտական ասոցիացիայի արշավախումբը Ստեփան Լիսիցյանի, Գ. Զուրսինի և Լազոյի մասնակցությամբ ազգագրական ուսումնասիրություններ է կատարել Լեռնային Ղարաբաղում, Զանգեզուրում և Լեռնային Քրդստանում։ Կովկասի պատմա-հնագիտական ինստիտուտի հանձնարարությամբ Ստ. Լիսիցյանը ազգագրական նյութեր է գրառել 1927 թ. Մեղրիում, իսկ 1928 թվականին՝ Ագուլիսի[56] շրջանում։ ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի միջոցներով Ե. Լալայանը ազգագրական և բանահյուսական արժեքավոր նյութեր է հավաքել Կոտայքի շրջանում[57]։ 1928 թ. Ստ. Լիսիցյանը նշանակվում է պետական պատմական թանգարանի ազգագրական բաժնի վարիչ և եռանդուն կերպով ձեռնամուխ է լինում ազգագրական նյութերի հավաքմանը, սկզբում մենակ, ապա արշավախմբերի գլուխ անցած, շատ արժեքավոր նյութեր է ձեռք բերում Զանգեզուրում (1931 թ.), Մեղրիում (1932 թ.), Լոռի-Ղազախում (1934), Ախալցխայի և Ախալքալաքի շրջաններում (1936), Նոր Բայազետի շրջանում (1938), Եղվարդի ենթաշրջանում (1946) և այլուր։ Այդ ժամանակաշրջանում Ստ. Լիսիցյանը գրի է առնում հսկայական ազգագրական նյութ և միաժամանակ թանգարանի համար հայթայթում շուրջ 1000 ցուցանմուշներ, որոնց մեջ կարևոր տեղ են գրավում ոսկերչական, զինագործական, կավագործական գործիքների հազվագյուտ կոմպլեքսները։ Նյութերի հավաքման և ուսումնասիրման գծով Ստ. Լիսիցյանի երկարամյա աշխատանքի արդյունքները ամփոփված են նրա ձեռագիր աշխատություններում, որոնց մեջ առանձնակի տեղ է գրավում «Զանգեզուրի հայերը» կապիտալ աշխատությունը, որը այժմ գտնվում է տպագրության պրոցեսում և հրատարակության պատրաստվող «Ղարաբաղի հայեր» հետազոտությունը։

Ազգագրական նյութերի հավաքումը ավելի սիստեմատիկ դարձնելու և գիտական հիմունքների վրա դնելու նպատակով Լիսիցյանը ձեռնամուխ է լինում «Ազգագրական հարցարան» կազմելու աշխատանքներին, որի կարիքը չափազանց մեծ էր, այն լույս տեսավ 1946 թ.։ Դա համակողմանիորեն կազմված ընդարձակ հարցարան էր՝ հետևյալ բաժիններով. տնտեսական կենցաղ, նյութական մշակույթ, սոցիալ-տնտեսական հարաբերություններ, հավատալիքներ, տոներ, լեզու և զիր, ժամանց, ժողովրդական բանահյուսություն, ար-

---

55 «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 3։ Ազգագրական տեսակետից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև Խ. Փորքշեյանի «Նոր Նախիջևանի հայկական դպրոցի պատմությունից» («Տեղեկագիր», 1957, № 10) և «Երբ և որտեղից են հայերը գաղթել Ջերբեկիա» («Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 2—3) հոդվածները։

56 Бюллетень КИЛИ, 1929, № 5.

57 Ե. Լալայան, Կոտայքի հաշվետվություն, «Տեղեկագիր» ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի, № 2, 1927։

վնստ։ Հարցարանն ուներ նաև գործնական ցուցումներ նյութեր հավաքողների համար, որտեղ տրվում էին անհրաժեշտ տեղեկություններ, թե ինչպես պետք է հավաքել ազգագրական նյութերը։ Հարցարանն այնքան հանգամանալից և գիտական սկզբունքներով էր կազմված, որ, ինչպես ճիշտ նկատել է պրոֆ. Հ. Կուսիկյանը, եթե այն համապատասխանեցրած չլիներ Հայաստանի պայմաններին՝ կարելի կլիներ թարգմանել այլ լեզուներով[58]։ Հարցարանի լույս ընծայումը խթանեց ազգագրական նյութերի հավաքման աշխատանքներին, և այդ հարցարանով այժմ առաջնորդվում են ոչ միայն մեր ազգագրագետները, այլև հարյուրավոր ուսուցիչներ և ուսանողներ, որոնք ազգագրական նյութեր են հավաքում։

Պատմության թանգարանի, ինչպես նաև Հայկական ՍՍՀ պատմության ինստիտուտի ազգագրագետները մեծ քանակությամբ նյութեր են գրառել իրենց թեմատիկ պլանների վերաբերյալ Հայկական ՍՍՀ շատ շրջաններում։ Պատմության ինստիտուտը կազմակերպեց մի քանի ազգագրական արշավախմբեր, որոնք ուսումնասիրություններ կատարեցին Սևանի ավազանում (1956), Հրազդանի շրջանում (1957), Իջևանի, Նոյեմբերյանի, Շամշադինի շրջաններում[59]։ Ազգագրական նյութերի հավաքումը ավելի քան մեծ չափերի է հասնում Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հիմնումից հետո։ Ավելի մեծ կոմպլեքս արշավախմբեր են ստեղծվում, որոնց կազմում ընդգրկվում են բացի ազգագրագետներից, բանագետներից նաև գեղանկարիչներ, լուսանկարիչներ, ճարտարապետներ, հնչյունագիրներ։ Այդ արշավախմբերը ինստիտուտի ազգագրության սեկտորի վարիչ Դ. Վարդումյանի ղեկավարությամբ շատ արժեքավոր նյութեր են հավաքել ոչ միայն Հայաստանի շրջաններում, այլև Սովետական Միության հայաբնակ վայրերում։ 1959 թ. Ռոստովի մարզի հայերի հոգևոր և նյութական մշակույթն ուսումնասիրելու նպատակով, այնտեղ է գործուղվում Հայկական ՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի կոմպլեքս արշավախումբը, որի ազգագրական ջոկատը ուշագրավ նյութեր է գրառում այնտեղի հայերի վերաբերյալ[60]։

1960 թ. առաջին անգամ կազմակերպվում է ազգագրական-բանահյուսական միացյալ արշավախումբ Իջևանի շրջանի հոգևոր մշակույթն ուսումնասիրելու համար։ 1961 թ. արշավախումբը նյութեր է հավաքում Նոյեմբերյանի շրջանում[61], 1962 թ. Կարմիրի շրջանում և Արխապական Ինքնավար Հանրապետության հայաբնակ վայրերում, 1963 թ. Շամշադինի, Իջևանի, Նոյեմբերյանի, ապա Սիսիանի, Գորիսի շրջաններում, 1964 թ. Կրասնոդարի երկրամասի հայաբնակ վայրերում[62], ինչպես նաև Հայկական ՍՍՀ Մեղրու, Ղափանի շրջաններում, 1965 թ. Աշտարակի, Ապարանի, Սպիտակի, Դուգարքի, Ալավերդու, Ստեփանավանի, Եղեգնաձորի, Ազիզբեկովի, 1966 թ. Շիրակի, Անիի, Ախուրյանի, Ամասիայի շրջաններում։ Սկսած 1966 թ. Դ. Վարդումյանը (Հայ-

58 «Советская этнография», № 1, 1948.

59 Д. Вардумян, Некоторые материалы по этнографии армян, АН СССР. Ин-т этнографии, «Краткие сообщения», XXXIII, Москва, 1960.

60 Դ. Վարդումյան, Ռոստովի մարզի հայերի մշակույթի և կենցաղի մասին, «Տեղեկագիր», 1961, № 10։

61 Է. Կարապետյան, Պատրոնիմիայի վերապրուկները հայերի մեջ (ըստ 1961 թ. դիտարշավախմբի նյութերի), «Տեղեկագիր», 1963, № 4։

62 Լ. Պետրոսյան, Կրասնոդարի երկրամասի հայերի մոտ, «Գրական թերթ», 1964, Հուլիսի 31։

կական ՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ), Թ. Ջիքովային (Վրացական ՍՍՀ ԳԱ պատմության, հնագիտության և ազգագրության ինստիտուտ), Ք. Կարակաշլին (Ադրբեջանական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտ) միասին գրում են կոլեկտիվ մենագրություն՝ «Փոքր Կովկասի կենտրոնական մասի ժողովրդական բնակարանը» թեմայով։ Դաշտային նյութեր հավաքելու նպատակով կազմակերպվեց միացյալ արշավախումբ, որը 1966 թ. անհրաժեշտ նյութեր հավաքեց Վրացական ՍՍՀ Բոլնիսի և Դմանիսի շրջաններում, 1967 թ. Հայաստանի Իջևանի և Շամշադինի շրջաններում, իսկ 1968 թ. նյութեր կհավաքի Ադրբեջանում։ Հրատարակված են նաև այլ ազգագրական նյութեր, որոնց մեջ կարևոր տեղ է գրավում Ե. Կարապետյանի Սասունի ազգագրության վերաբերյալ հավաքած նյութերը[63]։ Գրքին որպես հավելված Սասնա բարբառով կցված է նաև հարսանիքի նկարագրությունը պիեսի ձևով։

Հնագիտության և ազգագրության ինստիտուտը սկսել է «Նյութեր և ուսումնասիրություններ հայ ազգագրության և բանահյուսության» մատենաշարի հրատարակությունը, լույս է տեսել այդ մատենաշարի առաջին պրակը, որն ընդգրկում է Խ. Փորքշեյանի կազմած «Նոր Նախիջևանի բանահյուսությունը», շուտով լույս տեսնող 2-րդ պրակում զետեղված են Վ. Թեմուրճյանի «Գամիրքի հայերը» և Ե. Տեր-Մկրտչյանի «Վանա հարսանիք» աշխատությունները։ Հետագա պրակներում կտպագրվեն Գ. Հալաջյանի «Դերսիմի հայերը» և շատ այլ գործեր։ Արդեն լույս է տեսել Ա. Պատրիկի «Հայ տարազի ալբոմը»։ Տպագրության պրոցեսում է Վ. Աբրահամյանի «Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում» մենագրությունը։ Հրատարակության է պատրաստվում Վ. Բդոյանի «Երկրագործական մշակույթի պատմությունից Հայաստանում», Ա. Օղաբաշյանի «Ամանորի տոնակատարությունները հայերի մեջ» ուսումնասիրությունները և այլ աշխատություններ։

Ազգագրագետների հիմնական պրոբլեմներից մեկը՝ Հայաստանի պատմա-ազգագրական ատլասի կազմումն է։ Արդեն գրեթե պատրաստ են «Հայկական բնակարանը», «Հայ տարազը», «Երկրագործական գործիքները և երկրագործության եղանակները Հայաստանում հնագույն շրջանից մինչև XX դարը» բաժինները։ Լուրջ աշխատանք է տարվում հաջորդ մասերը պատրաստելու ուղղությամբ։ Այդ աշխատանքը կոորդինացվում են ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի ազգագրության ինստիտուտի, Վրաստանի և Ադրբեջանի պատմության ինստիտուտների հետ։ Արդյունքները կամփոփվեն «Անդրկովկասի պատմա-ազգագրական ատլասում»։

Մեծ աշխատանք է կատարվում Հայաստանի պատմության թանգարանում Ստ. Լիսիցյանի անվան ազգագրական կաբինետի կողմից, թանգարանի ազգագրական ֆոնդերը հարստացնելու ուղղությամբ։ Թանգարանի արշավախմբերը սիստեմատիկ նյութեր են հավաքում ոչ միայն Հայաստանի շրջաններից, այլև Սովետական Միության հայաբնակ վայրերից։ Վերջին 5—6 տարիների ընթացքում ձեռք են բերված շուրջ 5000 թանգարանային արժեք ունեցող իրեր՝ հագուստներ, գորգեր, կարպետներ, գյուղատնտեսական գործիքներ, զենքեր, պարդեր, ձեռագործներ։ Այժմ թանգարանի ազգագրական ֆոն-

---

[63] Ե. Կարապետյան, Սասուն, Հայպետհրատ, Երևան, 1962։

դերում պահվում են շուրջ 17000 ցուցանմուշներ, որոնց մեջ կարևոր տեղ են գրավում նաև արտասահմանի հայերի նվիրած արժեքավոր ազգագրական նյութերը։

Թանգարանում մեծ աշխատանք է կատարվում նաև թանգարանի իրերի հատկանշական ցուցակներ (կատալոգներ) կազմելու ուղղությամբ։ Արդեն կազմված են ոսկե իրերի և զարդերի, արծաթե իրերի և դարդերի, զգեստների, խեցեղենի, պղնձյա իրերի հատկանշական ցուցակները, ցավոք, դրանց հրատարակությունը խիստ դանդաղ է ընթանում։ Թանգարանում հրատարակության են պատրաստվում նաև ազգագրական բնույթի ալբոմներ, արդեն պատրաստ է ոսկե և արծաթե իրերի ալբոմը, աշխատանքներ են տարվում գործվածքեղենի լավագույն նմուշների ալբոմ կազմելու համար։

Ազգագրական տեսակետից առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում նկարիչ ազգագրագետ Ա. Պատրիկի կազմած հայ ժողովրդի տարազային քարտեզը, Խ. Ավդալբեկյանի Արևելյան Հայաստանի ազգագրական քարտեզները, Արևելյան Հայաստանը նախքան Ռուսաստանին միացնելը և միացնելուց հետո, վերոհիշյալ քարտեզները ցուցադրվում են Հայաստանի պատմության թանգարանում և Ռ. Վարդումյանի Հայաստանի ազգագրական շրջանների քարտեզը։

Հայ ազգագրագետներն իրենց կատարած դաշտային աշխատանքների մասին հետաքրքիր զեկուցումներով հանդես են եկել հնագետների և ազգագրագետների դաշտային աշխատանքներին նվիրված ամենամյա նստաշրջաններում, որոնք գումարվում են Սովետական Միության տարբեր քաղաքներում։ Նրանք մեծ հաջողությամբ ելույթներ են ունեցել՝ 1960 թ. Կիևում, 1962 և 1966 թթ. Մոսկվայում, 1963 թ. Մինսկում, 1965 թ. Բաքվում, 1967 թ. Քիշինևում հրավիրված նստաշրջաններում։ Այդ զեկուցումների մասին դրվատանքի խոսքեր են ասված նստաշրջաններում, ինչպես նաև մեր ազգագրական մամուլի էջերում[64]։ Այդ նույն հարցերին նվիրված զեկուցումները կարդացվել են նաև Հայկական ՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի բյուրոյի ընդլայնած նիստերում և հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական նստաշրջաններում։

1964 թ. օգոստոսին Մոսկվայում գումարված մարդաբանական և ազգագրական գիտությունների VII կոնգրեսում աչքի ընկան նաև հայ ազգագրագետները, որոնք հանդես եկան մի շարք զեկուցումներով և հաղորդումներով։ Նշենք դրանցից մի քանիսը՝ «Հայ ժողովրդի պարային և թատերական ֆոլկլորը» փայլուն զեկուցումով հանդես եկավ պատմական գիտությունների դոկտոր Ս. Լիսիցյանը։ Պատմական գիտությունների թեկնածու Դ. Վարդումյանի «Հայաստանի հիմնական ազգագրական շրջանների բնութագրումը XIX դարում» խորագիր կրող զեկուցումը մեծ հետաքրքրություն առաջ բերեց։ Ուշագրավ էր պատմական գիտությունների թեկնածու Էմ. Կարապետյանի «Պատրոնիմիական հարաբերությունների մնացուկները հայերի մեջ» զեկուցումը։ Հայաստանի պատմության թանգարանի գիտաշխատակից Ն. Ավագյանի զեկուցումը նվիրված էր թանգարանի ազգագրական ֆոնդերին։ Այսպիսով, Հայաստանից կոնգրեսին մասնակցում էին 26 գիտաշխատողներ, որոնք կարդացին 7 զեկուցում և ակտիվ մասնակցեցին սեկցիաներում և սիմպո-

---

64 «Советская этнография», 1963, № 5, 1965, № 6. 1966, № 5.

զիումներում քննարկվող հարցերին։ Նրանց կարդացած զեկուցումները տպագրվեցին ռուսերեն և օտար լեզուներով։ Այժմ մեր ազգագրագետները պատրաստվում են մասնակցելու մարդաբանական և ազգագրական գիտությունների VIII կոնգրեսին, որը տեղի կունենա Տոկիոյում 1968 թ.։

Սովետական շրջանում զգալիորեն աճել են նաև ազգագրական կադրերը. եթե սովետական իշխանության առաջին տարիներին Հայաստանում աշխատում էին ընդամենը 3 ազգագրագետ, այժմ նրանց թիվը անցնում է երկու տասնյակից, որոնցից երեքն ունեն պատմական գիտությունների դոկտորի, 6-ը՝ թեկնածուի գիտական աստիճան։ Արդեն պատրաստ են և շուտով պաշտպանության կներկայացվեն մի քանի դոկտորական և թեկնածուական դիսերտացիաներ։

Այսպիսով, սովետական իշխանության տարիներին զգալի աշխատանք է կատարվել հայ ազգագրության ուսումնասիրման բնագավառում, բայց այդ բոլորը դեռևս քիչ են։ ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի «Հասարակական գիտությունների հետագա զարգացման և կոմունիստական շինարարության ասպարեզում դրանց դերի բարձրացման միջոցառումների մասին» որոշումը պարտավորեցնում է մեզ բարձրացնել ազգագրական աշխատանքների որակը, հասցնելով այն պահանջված մակարդակի։